

վասն պիտոյիցն այնոցիկ: 24 Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն՝ հանդերձ հրովարտակաւք առ այր մի երեց, որում Յաբել կոչէին, որ էր մերձաւոր Դանիելի եպիսկոպոսի:

25 Իսկ Աբեղ այն զայն լուեալ, փութանակի հասաներ առ Դանիել, եւ նախ ինքն տեղեկանայր ի Դանիելէ նշանագրացն, եւ ապայ առեալ ի նմանէ՝ առ արքայ յերկրին հայոց, ի հինգերորդ ամի թագաւորութեան նորին հասուցանէր: 26 Իսկ արքայն հանդերձ միաբան սրբովք Սահակաւ եւ Մաշդոցիւ՝ ընկալեալ զնշանագիրսն յԱբեղայ, ուրախ լինէին:

27 Իսկ իբրեւ հասին ի վերայ, թէ չեն բաւական այն նշանագիրք ողջ ածել զսիւղորբ եւ զկապս հայերէն լեզուի, մանավանդ զի եւ նշանագիրքն իսկ ի յայլոց դպրութեանց քաղեալք եւ յարուցեալք դիպեցան: 28 Յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ ի նոյն հոգս դառնային, եւ նմին ելս¹ խնդրէին ժամանակս ինչ:

29 Վասն որոյ առեալ երանելոյն Մեսրոպայ դաս մի մանկտոց հրամանաւ արքունի եւ միաբանութեամբ սրբոյն Սահակայ, եւ հրաժարեալք ի միմեանց համբուրեալ սրբութեամբ՝ խաղայր զնայր ի հինգերորդ ամի Վռամշապուհ արքային Յայոց, եւ երթեալ հասաներ ի կողմանս Արամայ՝ ի քաղաքս երկուս Ասորոց. որոյ առաջինն Եդեսեա կոչի, եւ երկրորդին Ամիդ անուն: 30 Անդ դեպ լինէր սուրբ երանելի եպիսկոպոսացն. որոյ առաջնուն Բաբիղաս անուն էր, եւ երկրորդին Ակակիոս, հանդերձ կղերականաւքն եւ իշխանաւք քաղաքաց պատահեալ, եւ բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգեբարձութեամբ, ըստ Զրիստոսի անուանելոյ կարգի:

31 Իսկ աշակերտասեր վարդապետին՝ գտարեալսն ընդ իւր յերկուս բաժանեալ, զոմանս յասորոց դպրութիւն կարգեր [ի քաղաքին Եդեսացոց], եւ զոմանս յունական՝ անդր ի Սամոսատական քաղաքն գումարէր:

32 Եւ նա իւրովք հաւասարաւք զսովորականն առաջի եղեալ զպահս եւ զաղաւթս եւ զտքնութիւն եւ զպաղատանս արտասուաբեր, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհամեծս, յիշելով զասացեալսն մարգարէին, թէ՝ *Յորժամ հեծեծեսցես, ապա՝ կեցցես*^ա:

33 Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ վասն իւրոյ ազգին բարեաց աւճան գտանելոյ: 34 Որում եւ պարգեւեր իսկ վիճակ յամենաշնորհն աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: 35 Եւ անդէն վաղվաղակի նշանագրեալ, անուանագրեալ եւ կարգեալ սիղոյթայիւք, յաւրիններ եւ կապաւք եւ ձայնատուր նշանաւք:

¹ Թիւրիմացաբար՝ եւս՝ ելս-ի փոխարէն

^ա Եւ. Լ 15